

**THE USING OF THE NEW FORMED NOUNS AND THEIR STRUCTURE TYPES IN THE
WORKS OF HOVHANNES ODZNETSI**

V. A. Nersisyan

There are many new – formed words by different parts of speech (nouns, adjectives, adverbs, verbs) used in the works of Hovhannes Odznetsi.

In the research paper is presented the usage of the new nouns and their structure types, is given analysis of those words.

**ԱԾԱԿԱՆ ՈՐՈՇՉԻ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ
ԳՈՅԱԿԱՆԱԿԱՆ ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

**Ս. Կ. ԽՎԱՂԱՆՅԱՆ
ԳՊԴ դասախու**

Որպես հատկանիշ արտահայտող բառերի կարգ՝ ածականը ժամանակակից հայոց լեզվում ծևաբանորեն բնորոշվում է նրանով, որ գործիք է թեքման ձևերից և գոյականի վրա դրվում է միայն ուղիղ ձևով: Ածականի այս հատկանիշով աշխարհաբարը տարրերովում է գրաբարից: Գրաբարում «որոշակի դեպքերում ածականը թվով և հոլովով համաձայնում էր գոյականին: Գրաբարի քերականություններում այս հարցի վերաբերյալ ստվորաբար տրվում է հետևյալ ընդհանուր կանոնը. գրաբարում միավանկ ածականները և նախադաս, և ետադաս կիրառությամբ թվով ու հոլովով համաձայնում են գոյականին....., իսկ բազմավանկ ածականները նախադաս գործածությամբ որպես կանոն չեն համաձայնում....., իսկ հետադաս գործածությամբ համաձայնում են..... : Բայց այս կանոնն էլ գրաբարի համար մի պարտադիր օրինաչափություն չէր և ուներ իր բազմաթիվ շեղումներն ու օրինաչափությունները» /էջ 136/:

Սակայն լեզվի հետազա պատճական զարգացման ընթացքում ածականի և գոյականի համաձայնության այս օրինաչափությունը վերանում է: Աշխարհաբարում այն հասել է պարզ դրության, այն է՝ գոյականական բառակապակցություններում ածական-որոշիչը չթեքվող է, հանդես է զալիս ուղիղ ձևով:

Յայտնի է, որ ածականը ամենից շատ հանդես է զալիս որոշչի պաշտոնում: «Որոշչային կիրառությունը ածականի ամենասովորական ու զանգվածային, ամենատարածված կիրառությունն է» /էջ 137/:

Գոյականական բառակապակցություններում որոշիչ կարող են դառնալ և որակական, և հարաբերական ածականները: Ածականի նման որոշիչ կարող են դառնալ հարակատար, ենթակայական և ապակատար դերբայները, նաև՝ որոշ մակրայներ: Պարզապես պետք է հիշել, որ ածականի և դերբայների տարրերությունն այդ դեպքում այն է, որ ածականի արտահայտած հատկանիշն անկախ է ժամանակի գաղափարից, իսկ դերբայի արտահայտած հատկանիշն հատուկ է ժամանակային գաղափար:

Քանի որ որակական ածականն արտահայտում է չմիջնորդավորված, իսկ հա-

բարերական ածականը՝ միջնորդավորված հատկանիշ, բնականաբար գոյականական բառակապակցություններում ածական-որոշիչը հանդես է գալիս երկու դերում՝ որակական ածական-որոշիչ և հարաբերական ածական-որոշիչ:

Ածական որոշիչի արտահայտությունը գոյականական բառակապակցություններում ներկայացնենք ըստ այդ դասակարգման:

Որակական ածականով որոշիչ առանձնահատկությունները գոյականական բառակապակցություններում:

Խոսքի արտահայտման և գրավոր, և բանավոր ձևերում խոսքը ճիշտ և գեղեցիկ կառուցելու համար մենք գործածում ենք ածական-որոշիչ ունեցող գոյականական բառակապակցություններ: Դրանք հաղորդակցման ընթացքում ենթակայից և ստորոգյալից հետո անենից շատ հանդես եկող լեզվական միավորներն են: Դաղորդակցումը կատարվում է կյանքի մեջ հայտնի բոլոր բնագավառներում, և նմանատիպ բառակապակցությունները կիրառվում են գրեթե բոլոր մասնագիտություններում, որոնք իրենց քանակով շատ են ու բազմազան:

Ստորև խմբավորված ներկայացրել ենք կյանքի մեջ ծանոթ գրեթե բոլոր ոլորտներն ընդգրկող բառերը, որոնք դառնում են գոյականի որակական ածական-որոշիչ լրացումներ: Պարզապես նշենք, որ որակական ածականների մի մասը բազմինաստ բառեր են, ուստի նույն ածականը կարող է հանդես գալ իմաստային տարբեր խմբերում՝ ըստ տվյալ կիրառության մեջ իր արտահայտած նշանակության:

Ըստ շարադասության ածական որոշիչը լինում է և նախադաս, և հետադաս: Չափածն խոսքում ավելի շատ հանդիպում է երկրորդ ձևը:

● Տարածական հատկանիշ արտահայտող բառեր- լայն դաշտ, նեղ պատուհան, հեռու երկիր, թեք լեռներ, երկար ճանապարհ, խոր փոս, կարճ արահետ, աջ փողոց:

● Տեղի հատկանիշ արտահայտող բառեր- վերին ատամնաշար, կից կառույց, հետին դրու, արտաքին օրգաններ, դիմացի պատ, ներքին փողոց:

● Կառուցվածքային հատկանիշ արտահայտող բառեր- բարձր շենք, ցածր արոռ, հաստ բուռն, ուղիղ պատ:

● Ծավալային հատկանիշ արտահայտող բառեր- լիքը պարկ, դատարկ դույլ, ծավալուն աշխատանք, քիչ պարունակություն:

● Քանակային հատկանիշ արտահայտող բառեր- քիչ գրքեր, շատ կոնֆետ, ավել խոսք, պակաս գործ, զույգ աչքեր, կենտ թիվ:

● Կազմվածքային հատկանիշ արտահայտող բառեր- բարակ մեջք, մանր աչքեր, նիհար մարմին, կոր մեջք, գեր տղա, ուղիղ ոտքեր, ծուռ մատներ, չոր ձեռքեր:

● Զգայական օրգանների կողմից ընկալվող հատկանիշ արտահայտող բառեր.

ա. տեսողական օրգանների կողմից ընկալվող հատկանիշ արտահայտող բառեր- գեղեցիկ աղջիկ, մութ գիշեր, լույս առավոտ, տգեղ արարք, թեժ կրակ, հաճելի շարժումներ, դուրեկան արտաքին,

բ. լսողական օրգանների կողմից ընկալվող հատկանիշ արտահայտող բառեր- ուժեղ դռաոց, թույլ աղմուկ, մեղմ սոսափ, կոպիտ հազ, թավ ձայն, հաճելի երաժշտություն,

գ. շոշափող օրգանների կողմից ընկալվող հատկանիշ արտահայտող բառեր-սառը պատ, կոշտ կտոր, նուրբ ձեռքեր, փափուկ բարձ, տաք առարկա,

դ. հոտոտելիքի օրգանների կողմից ընկալվող հատկանիշ արտահայտող բառեր- սառը օդ, տաք օդ, նամ օդ, անուշ բույր, վատ հոտ, հարծելի օժանելիք,

Ե. համտեսի օրգանների կողմից ընկալվող հատկանիշ արտահայտող բառեր-աղի կերակուր, հում կարտոֆիլ, թթու սալոր, կծու տաքդեղ, տտիպ արքայանարինջ, դառը կորիզ, քաղցր խնձոր, համեղ աղցան:

● Զգացողություն արտահայտող բառեր- սոված երեխա, կուշտ մարդ, ծարպ տղա, անոթի գյուղացի, պապակ սիրու:

● Մարդկանց և կենդանիների ֆիզիկական հատկանիշ արտահայտող բառեր- ծեր որսորդ, կույր երաժիշտ, ջահել տղա, նիհար տատիկ, առողջ բալիկ, հիվանդ կատու, առույգ շնիկ:

● Բնավորության հատկանիշ արտահայտող բառեր- հպարտ ծնող, աշխույժ երեխա, համար աշակերտ, նենաց թշնամի, ծույլ ուսանող, գոռոզ հարևան, ազնիվ զինվոր, բարի կախարդ, չար կախարդ, խորամանկ աղվես:

● Բարոյական հատկանիշ արտահայտող բառեր- ազնիվ որոշում, արդար վճիռ, ճիշտ պատասխան, սիսալ ուղղություն, նենաց արարք:

● Յոգեկան հատկանիշ արտահայտող բառեր- տխուր աչքեր, կեղծ ժպիտ, տրտում հայացք, աշխույժ շարժումներ, զվարթ ծիծաղ, գոհ վիճակ, խիստ պատասխան, ցինիկ պահվածք, վստահ ձայն:

● Մտավոր հատկանիշ արտահայտող բառեր- տխմար վիճակ, հիմար երեխա, գիտուն օրիորդ, խելոր ուսանող, կիրթ երիտասարդ, խոհուն հայացք, հասուն պատասխան:

● Ժամանակի հատկանիշ արտահայտող բառեր- վաղ առավոտ, ուշ երեկո, տևական րոպեներ, նոր տարի, առավոտ կանուխ, նախորդ օր, վաղեմի բարեկամ, հավերժ սեր:

● Գունային հատկանիշ արտահայտող բառեր- կարմիր ժաղիկ, կանաչ տերև, ճերմակ զգեստ, դեղին մատիտ, կապույտ գրիչ, սպիտակ խալաթ, սև ներկ, խած աչքեր, լուրջ երկինք, լաջվարդ շապիկ:

● Գույների որոշակի հարաբերության հատկանիշ արտահայտող բառեր, որոնք երբեմն ավելանում են գույն ցույց տվող բառերի վրա- ալվան ծաղիկ, մուգ գույն// մուգ կապույտ, բաց գույն// բաց դեղին, վառ երանգներ// վառ կարմիր, ալ ծաղիկ// ալ կարմիր:

● Ունենալ-չունենալու հատկանիշ արտահայտող բառեր- կեղլտոտ ձեռքեր, մսոտ դեմք, գունատ երես, լուսավոր սենյակ, մազոտ թևեր, պոչատ աղվես, բեղավոր պապիկ, ծամավոր աղջիկ, անմազ երես:

● Ունակության հատկանիշ արտահայտող բառեր- կծու խոսք, խոսուն վկա, շարժուն ուժ, հատու կացին, խռովկան աղջիկ:

● Մի բան կատարողի հատկանիշ արտահայտող բառեր- հմայիչ ժպիտ, ժպտուն աչքեր, թովիչ պատասխան, քաղաքավարի տղա:

● Արտաքին և ներքին հատկանիշ արտահայտող բառեր- խուճուճ մազեր, շքեղ մեքենա, տգեղ դեմք, փթթուն դաշտեր, առատ բերք, դառը համ, քաղցր կոնֆետ, գրավիչ ժպիտ, նուրբ / գիրթ, կտրուկ, քնքուշ, կոպիտ, աշխույժ/ շարժուն:

- Դրության, վիճակի հատկանիշ արտահայտող բառեր- բաց դուռ, փակ լուսամուտ, լուր պահեր, նոլի խաղացող, մռայլ օր, խոպան դաշտեր:
- Նյութի ֆիզիկական վիճակի հատկանիշ արտահայտող բառեր- հեղուկ գագ, կարծր քար, սառը ջուր, պինդ մարմին, փափուկ մետաղ, խիտ զանգված, թանձր հյութ, կպչուն նյութ, մածուցիկ սոսինձ, թափանցիկ կտոր:
- Բնության երևույթները բնութագրող հատկանիշ արտահայտող բառեր- ուժեղ քամի, հրոր անձուկ, առատ ծյուն, անդորր առավոտ, խոնավ կլիմա, չոր եղանակ, մռայլ օր, տոշոր ամառ, հով երեկո:
- Համեմատության աստիճան չունեցող որակական ածականներ- լիքը բաժակ, դատարկ պայուսակ, կաղ պահակ, խենք արարք, ստերջ անասուն, ծակ նասիկ, կույր երգիչ, շիլ աչքեր, ամուլ դաշտեր, կիսատ խոսք:
- Ածականի և գոյականի հատկություններ գուգակցող բառեր- կախարդ տատիկ, հիվանդ մարդ, մանուկ հասակ, մատնիչ զինվոր, թշնամի ընկեր, նեզր ստրուկ, էգ առյուծ, որբ մանուկ, կտրիծ տղա, ձայնավոր հնչյուն:
- Ածականաբար գործածվող մակրայներ- արագ վազք, դանդաղ ընթացք, շատ ընկերներ, լիովին ոչնչացում, հավետ փառք:
- Գիտաբառեր- դրական լիքը, բացասական դաշտ, ներքին /արտաքին/ հարաբերություններ, ձայնեղ հնչյուններ, խուլ /շնչեղ, պարզ/ բաղաձայններ, ձայնորդ /կիսաշփական, կիսապայթական/ հնչյուն, բարդ նախադասություն, կայուն շարադասություն, վերին շնչուղիներ, ներքին արյունահոսություն, ուղիղ անկյուն, բութ անկյուն, կոր գիծ:
- Տարիքային հարաբերություն արտահայտող բառեր- ծեր վարպետ, ջահել երգիչ, երիտասարդ մասնագետ, պատանի նկարիչ:
- Ներբայական ձևերից առաջացած ածականներ- ցանկալի հյուր, տեսանելի պատկեր, վերծանելի նյութ, ուսանելի գիրք, ցավալի կողմ, ըղձալի գործ:
- Հասարակական ընկալում արտահայտող բառեր- հայտնի գործիչ, հանձարեղ բանաստեղծ, անհայտ զինվոր, վայելուց արտաքին, պատշաճ վերաբերմունք, հավանական թեկնածու, հարգելի ընկեր, նշանավոր հեղափոխական, կարևոր հանդիպում, փառավոր ուղիղ:
- Մարդու գործունեությունը բնութագրող բառեր- հեշտ առաջադրանք, դժվար խնդիր, պարզ մտածելակերպ, բարդ իրավիճակ:
- Արժևորման հատկանիշներ արտահայտող բառեր- ձրի ապրուստ, թամկ կոշիկ, էժան շոր, գեղչ գներ:
- Անհատների և հասարակության ընկալում արտահայտող բառեր- հնարավոր տարբերակ, մոտիկ ընկեր, մտերիմ բարեկամ, հավատարիմ ամուսին, ճիշտ մոտեցում, սխալ իմացություն, սուտ խոսք, խորթ մայր, օտար հայացք:
- Մարդու և կենդանիների գոյավիճակ արտահայտող բառեր- միայնակ օրիորդ, այրի կին, ամուրի հարևան, արամբի բարեկամ, կնամբի օտարական, ստերջ կով:
- Կոնկրետ վիճակ արտահայտող բառեր- ներկա ուսանող, բացակա աշակերտ, առկա կրթություն, հեռակա ֆակուլտետ:
- Մարդու կողմից արժևորում ցույց տվող բառեր- շահավետ առաջարկ, նպաստավոր պայմաններ, չնչին օգուտ, անշահախնդիր ընկերություն, եկամտաբեր աշխատանք, շահեկան գործարք:

- Բարոյական հատկանիշ արտահայտող բառեր- ցոփ կյանք, գեխ ապրելաձև, շվայտ երիտասարդ, լիոր կին, առաքինի տիկին:
- Գրաբարյան ձևեր- ախորժ բույր, թառան ծաղիկ, զվարք աչքեր, առածո սնունդ:
- Ժողովրդախոսակցական բառեր- նաղդ առևտուր, նիսիա առևտուր, ցիցը բերան, ղըռ չորբան, լողի մարդ, թաթարի գործ, ցմիոր քեռի, կճատ աղջիկ, լալ պահակ, թիւ շոր, ճզլող տղա:
- Օտարաբանություններ- ֆալշ նոտա, ֆանտաստիկ գրականություն, ֆենոմենալ հիշողություն, վիրտուալ ուսուցում, /ի՛հացիոնալ լուծում, սիմթետիկ վերնաշապիկ, լյուքս համար, սինվոլիկ պատկեր, պասիվ զանգված, միստիկ գործ, պաթետիկ ստեղծագործություն, լակոնիկ ոճ:

ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Մ. Ասատրյան*, ժամանակակից հայոց լեզու. Զեարանություն, Երևան, 1983 թ:

СПОСОБЫ ВЫРАЖЕНИЯ АДЪЕКТИВНОГО ОПРЕДЕЛЕНИЯ В СОВРЕМЕННЫХ АРМЯНСКИХ СУБСТАНТИВНЫХ СЛОВОСОЧЕТАНИЯХ

C. K. Xandanyan

В статье представлены особенности определения, выраженного прилагательным в субстантивных словосочетаниях.

Определение выступает в двух ролях - в роли определения, выраженного качественным представлением субстантивные словосочетания с определениями, выраженными относительными прилагательными, относящимися к разным сферам жизни и составляющим разные семантические группы.

THE PECULIARITIES OF THE ADJECTIVE ATTRIBUTIVE SUPPLEMENTS IN NOMINAL WORD-COMBINATIONS

S. K. Khandanyan

The peculiarities of the adjeciti-attributive supplements in nominal word-combinations are presented in the article. They perform two functions-qualitative adjective and relative attributive supplement.

Different word combinations having relative adjective attributives concerning to the various spheres of life are groped according to their semantic definition.